ԿԱՐԱԼԵՍ

ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԿՐՆՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԳՐԵՐԸ

ՀԱՑ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

11

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ

ԱՀԳ

1. Կաթողիկէ Սրբազանքը սա այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիճակեայի բաժանորդագիրն է ինքն անոնց հարար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքելորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանք է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս միտիարդուի, ծանաչն ու ձեռք, ինչպես նաեւ բաժանորդագրութեան պայմանի վերջնականապես պիտի ճշդուին: — Մեկ թիւը՝ մեկ դահեկան է:

2. Սրբազանքը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Թերագրութիւնս պարտաւորեալ չի անպատեան կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ւ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցեալց համար ծանուցեալ պայմանագրութիւն կը կատարուի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 2 Սեպտեմբեր 1911 | Թիւ 11.

ՄԱՏԻՏԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՋ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հիանալ շլացուցիչ տեսիլքի մը առջև և զմայլումի արբեցութեան մէջ մնալ գործնական հետևանք մը չունենար, հարկ է օգտուիլ պարագայէն, քաղել այն հետևանքներն, որոնք հանդէսներու շքեղութեան, հանդիսականներու խանդավառ շարժումին մէջ կրնան անտեսուիլ, բայց որոնք ամբողջ հանդիսին հոգին և զայն սարքողներու գլխաւոր նպատակն եղած են։

Սպանիական միջազգային համաժողովի վրայ մեր տուած տեղեկագրութիւնն կարդալով՝ անշուշտ ընթերցողք ազգի մը տաք հաւատքի հրդեհն էր որ նշմարեցին և իրաւամբ կրցան զմայլիլ տեսնելով որ ամբողջ ազգ մը զՔրիստոս 'ի Հաղորդութեան իրեն Տէր ու Թագաւոր կը դաւա-

նէր ու կ'օրհնաբանէր, զինուորական դասն մուցած էր կարծես իր երկրաւոր թագաւորը՝ միայն երկնաւորին երկրպագելու և ծառայելու համար, թագաւորական Գերդաստանը իր Գահէն իջած էր վար՝ հասարակ ժողովրդեան կարգը՝ զայն յաւիտենական Արքային նուիրելու համար։ Ո՞վ չի տեսներ հաւատքի առջև մարդկային հաւասարութեան շքեղ պատկերը, որ կարելի չէ ո՛ և է դրութեան և աղանդի վրձինով նկարել։ Բայց աւելին կայ. ամբողջ ժողովուրդ մը ոտքի կ'ելլէ, կը յուզուի, կը խանդավառի, և խաղաղութիւն ու կարգապահութիւն կը տիրեն, կրքերն կը ցածնուն, և մէկ կեդրոնի շուրջ ամէն զգացումներ բակ կը կազմեն սիրոյ, հաշտութեան, արդարութեան կապերով։ Ո՞վ չնշմարեր ճշմարիտ եղբայրութեան ո՛չ բառացի՝ այլ գործնական հանդէսը, զոր կարելի չէ գտնել ուրիշ աշխարհային ցոյցերու ժխոուին ու աղմուկին մէջ։

Հոգւոց Թագաւորն է որ խոնարհ զիջողութեամբ կուգայ իր ժողովրդեան մէջ և հոն թագաւոր ու հպատակ, ազնուական ու ռամիկ, հարուստ ու աղքատ, ծեր ու մանուկ կը հաւասարին, որովհետև հոգւոց վրայ է որ կը թագաւորէ Նա և հոգիներն հաւասար են։ Խաղաղութեան թագաւորն է որ հողմոց ու աշխարհախառով ծովերու հրաման կ'ընէ լռելու, և ահա հեզութիւն ու սէր կը շնչեն ամէն կողմ մեղմիկ զեփիւռի պէս, ու կը ցածնուն կրքեր, ոխ ու նենգութիւն կը մոռցուին և ամէն հոգի սէր կ'ուխտէ իր Տիրոջ և Անով իր եղբօր, որուն կը հանդիպի նոյն Տիրոջ շուրջը։ Խաղաղութիւնը աշխարհի վրայ միայն Քրիստոսիս կարելի է ձեռք բերել։

Սուրբն Բարսեղ հոգիներն որ՝ Ս. Հաղորդութեամբ կը մնանին, կը նմանցնէ հալոցի մէջ դրուած մոմեղենի կտորներու, որոնք կը լուծուին, կը խառնուին իրարու և կը շաղուին. ահա քրիստոնէական զանգուածն 'ի Քրիստոս, որ բոլոր ազգերուն Եկեղեցւոյ մէջ միութիւնն կը բացատրէ. երկնից արքայութիւնն խմորի նման որ ամբողջ մարդկութիւնն կը խմորէ 'ի Քրիստոս, որ է հաց յերկնից իջեալ։ Ո՛վ հրաշալի խորհուրդ, որուն գաղտնիքը ծածկուած է աշխարհի իմաստնոց յայտնուելու համար տղայոց։

Այս բարերար ապրեցութեան և արդեանց զօրութեամբ է որ կաթողիկէ Եկեղեցին կեանք ունի և մեռեալ չէ, ջերմին է և չէ գաղջ, դալար է շարունակ և բողբոջուն և չէ չոր ու ցամաք։ Կաթողիկէ Եկեղեցին միայն Ամենասուրբ Հաղորդութեան կենդանի ու գործնական պաշտամունքը ունի և կը թեկնադրէ շարունակ. որովհետև նա միայն Քրիստոսի ճշմարիտ արքայութիւնն է, ուր իր սիրելեաց հետ իրօք կը կենակցի և զանոնք պըտղաբեր կ'ընէ և յարաճուն։ Այս պատճառաւ է որ կաթողիկէ Եկեղեցւոյ

Գերագոյն Հովիւներն միայն հոգ տարած են ամէն ժամանակ հաւատացեալց մէջ վառ պահելու այս կենսունակ ջերմեռանդութիւնը։ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ է որ ամէն հնարագէտ ճարտարութեամբ շարադրուած են աղաղողութիւններ, սարքուած են ծէսեր, հաստատուած են ընկերութիւններ Հայրի և Գիւնւոյ խնարհ տեսակաց ներքև ծածկուած Աստուծոյ երկրպագութեան համար։ Պիոս Ժ.ի վերջին կարգադրութիւններն լաւ և արթընցուցին հին ու առաքելական դարերէ ի վեր Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ միայն յարատևած սովորութեանց յաճախ, ամէն օր հաղորդուելու և չզրկելու անկից նոյն իսկ մանուկներն։ Աքանչելի միջոց թագաւորեցնելու մեր վրայ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, աստուածուրաց դարու մը մէջ։ « Թո՛ղ յաճախեն, կ'ըսէ, աստուածարեալ Քահանայապետը, այն ամէն հանդիսութիւնք որ այս օգոստափառ Խորհուրդին պաշտամունքը աւելի փայլուն աւելի պատուական ըլլայ. որպէսզի եղած նախատիններն քաւուին եւ յաճախ հաղորդուելու սովորութիւնը վերակենդանանայ, որպէսզի համոզուի ամէն ոք թէ այս պաշտամունքին աւելի ազդու միջոց չիկայ հոգիներն միացնելու խաղաղութեան եւ փոխադարձ սիրոյ կապերով, որոնց քրիստոնեայ եւ խաղաղական ընկերութիւնը մեծապէս պէտք ունի » (Թղթ. Առ Կարդ. Վանսուդէլլի 9 Մայիս 1910)։ Եւ մանկտւոյ հաղորդութիւնը կարևոր է կը գրէ « Որպէսզի անմեղութեան ծաղիկը ներկայ դարուս ապականիչ խորշակին հանդիպելէ առաջ՝ պատրաստուի Անոր քով, որ կը հովուէ շուշաններու մէջ. որպէսզի մանկանց անմեղունակ աղօթքով Աստուած իր սպառնական ձեռքն ետ առնու. որպէսզի մինչ որդիք կորստեան կ'աղաղակեն ՝ԼՄԻՄ ԲԱՔԱՈՐՈՒԵԼ ԴՈՒ Է ՎԵՐՅ ՄԵՐ ՆԱ, արժանաւոր թագաւորութիւն մը կանգնէ անոնց սրտերուն մէջ, որոնց է էրինէց արքայութիւնը » (Թղթ. առ Եպս. Կուէլլիէ 5 Սեպտ. 1910)։

Կաթողիկէ Սպանիա այս երկու յորդորներուն հանդիսաւոր պատասխանն տուաւ՝ երբ հարիւր հազարաւոր ժողովուրդ երկրպագեց իր Տիրոջ և զայն հիւրընկալեց իր սրտին մէջ յաճախ հաղորդութեամբ, երբ երեսուն հազար անմեղ հոգիներ թուուտեցան երամովին բացօդեայ բուրաստանի մը մէջ Ս. Սեղանոյն շուրջը և ճաշակեցին զՔրիստոս. այն օրը անշուշտ Սպանիոյ համար երդեցին հրեշտակներն. « փառք 'ի բարձունս և յերկիր խաղաղութիւն »։ Եւ Աստուած ինքն հաճութեամբ իրեն օթեվան ընտրեց այդ բարեպաշտ թագաւորութիւնը։

Վեհաշարժ թափորն արքունական Պալատն հասած էր, արքունականք կը դիմաւորեն զայն և կը հետևին Անոր 'ի մատուռն, ուր իրենց յարգանքը կ'ընծայեն. վերջին շարժումը մնացեր էր, Աստուած իրեն կ'ուզէր ամբողջ

Սպանիան, Թագաւոր ու Թագուհի ըրած էին նուիրումն իրենց սրտին մէջ։ Եւ ահա քիչ վերջ Ս. Հաղորդութիւնը Գահասրահին մէջ, Արքունական Գահին վրայ բազմած էր — Գահը խորանի փոխուած, խորհրդաւոր վայրկեան։ Կ'որոտան թնդանօթք, կը փորոտան փողեր զինուորական դասու հպատակութեան շարժումներն կը շառաչեն, դուրսը ծովացեալ ժողովուրդն խանդավառ կը ծափահարէ, և երկնաւոր Թագաւորին առջև Սպանիոյ Թագակալ գլուխը կը խոնարհի յերկիր՝ համայն ընտանեօք արքունի և մեծամեծներովն, և արքունական մատրանապահ քահանայ մը կը կարդայ Սպանիոյ նուիրումը Ս. Հաղորդութեան։ « Ո՛վ բարձրեալ Տէր, կենդանի ի Սուրբ խորհուրդ Հաղորդութեան, Թագաւոր Թագաւորաց, Տէր ամէն անանց որ կը կառավարեն, շնորհաց ու գթութեան օգոստափառ Գահոյիցդ առջև յերկիր կը խոնարհի բովանդակ Սպանիա՝ Քու Սրտիդ յոյժ սիրական զաւակը։ Մենք քու ժողովուրդդ ենք, Թագաւորէ՛ մեր վրայ։ Քու ինքնակալ արքայութիւնդ տուէ յաւիտեանս, յաւիտենից ամէն »։ Ահա համաժողովի Սպանիոյ մէջ փակումը, որուն առջև կը հրաւիրենք ընթերցողներն հիացումէ վերջ գործնականապէս քրիստոնեայ ըլլալու մանաւանդ ջերմեռանդութեամբ Սուրբ Հաղորդութեան։

ՊԱՏԱՄԽԱՆ ԱՌ ԴԻՏՈՂ

Ա. Առաջին ճիչը զոր կ'արձակէ Դիտողը, տարթուած է իր զայրոյթէն զոր կը զգայ երբ Կաթողիկոսական կոնդակը երկիւղ ցոյց կուտայ որ « Ոմանք միտում ունենան ինքնուրոյն եւ ազատ եկեղեցի մը հաստատելու »։ և առանց վարանքի և մղուելով առաջին շարժումէն՝ կ'աղաղակէ. « Ամո՜թ այսպիսի յանդուգն դատողութեան »։ Ո՞վ գիտէ, կարելի է սոյնօրինակ եռանդնաբորբոք մերժումի մը հարուածով ամէն տարակոյս կը կարծէր փարատել։ Բայց այս խնդիրը պէտք է քիչ մը լուսաբանել։

Նախ՝ պէտք է ընդունիլ որ կարելի է ոմանց մտքին մէջ այսպիսի գաղափար մը գտնուած ըլլայ, թաքուն, անմատչելի ծալքերու մէջ փաթթուած, և միայն իր գլուխը ցցունող՝ շատ մտերիմ, գրեթէ համախոհ բարեկամաց առջև։ Ստէպ, գոնէ քմծիծաղով մը համեմուած, չե՞նք լսեր միթէ դիւրաթեք խուսափուկ նախադասութիւններ, ինչպէս այս. Ե՞րբ

սա Հռոմէն պիտի ապատինք... Հռոմ մեղի ինչ կը խառնուի:.. Նոյն իսկ մեր ժողովներուն մէջ անոնց որ Հռոմայ իրաւունքները հանարձակին բացայայտ պաշտպանելու, դէմն ի վեր նետող չկա՞յ միթէ անդրդեռնական մակդիրը. և գիտէք քաջ թէ այդ բառը թունդ Կաթողիկեայ ըսել է, այս ինքն Հռոմայ Ս. Գահուն Գերագոյն իշխանութեան հնազանդ: Կ'անգիտանա՞ք արդեօք որ մերթ ընդ մերթ այլազան համախմբումներու մէջ ոմանք կ'ուրակուին — երգիծաբանօրէն՝ bien entendu! — իբր յոյժ յարեալք (attaccatissimi) Հռոմայ Ս. Գահուն: Մտածելու և խօսելու այս եղանակը, ոգւոյ այս վիճակը ձեզի եղական չերևի՞ արդեօք: Եւ ի՞նչ պիտի ըսէք մանաւանդ ոմանց յանդգնագունից, որոնք աւելի առաջ երթալով, կը ծաղրեն բանադրանքը՝ նոյն իսկ աւանդատուններու մէջ. կամ ներողութիւնը՝ իբր միջնադարեան մգլոտած մնացորդ: Արդեօք այդպիսիները իրենց մտաց զօղեալ խորշերուն մէջ չե՞ն կրնար ունեցած ըլլալ և մնուցանել փայփայել ազգային կաթողիկէ Եկեղեցի մը ունենալու միտութիւնը Եկեղեցի մը՝ ինքնավար, ազատ և ազատ ո՛և է կաշկանդումէ: Եւ արդէն կը կարծէ՞ք թէ բնաւ տեղի ունեցած չէ՞ մեր մէջ այսոեսակ բան մը: 1870ի Նոր - հերձուածի խնդրոյն ժամանակ ի՞նչ էր Ոսկերերան եկեղեցւոյ խմբակին դրութիւնը. « Հռոմայ Քահանայապետին դատաստանաւն ու իշխանութեամբը Կաթողիկէ Եկեղեցիէն անջատուած » էին. « Նոր հերձուածողք կը հաստատեն թէ... միայն էրենց Եկեղեցիներուն և ազգին... իրաւունքները կը պաշտպանեն ». « իսկ անոնք զԱռաքելական Աթոռն արտաքին իշխանութիւն անուանել կը յանդգնին. այսպէս ըսելովնին՝ Եկեղեցւոյ միութիւնը կը պատրեն... Այս հիմէն զեկեղեցին բաժնողները, ա՛լ աստուածային և կաթողիկէ Եկեղեցին չեն պահեր, հապա կը ջանան մարդկային եկեղեցի մը շինել որ ազգանունէն ըսուած մարդկային կապերով միայն կապուած » է (Quartus, թիւք 15, 16, 48.): Ահա, ո՛վ Դիտող, այսպէս եղաւ ան ատեն « ինքնուրոյն և ազատ եկեղեցի »: Կայլիքան եկեղեցւոյն բոլոր պատմութիւնը գիտե՞ս արդեօք՝ ամբողջ մանրամասնութեամբը. անոնք այսչափ ալ փափագելիք — desiderata — չունէին: Կամ արդեօք պիտի ըսե՞ս որ հիմա ոչ ոք այլ ևս կը խորհի նոր հերձուածողաց պահանջանաց վրայ: Ահա հոս է խոշոր սխալը: Ես կ'ըսեմ թէ ո՛չ միայն խորհողներ կան, այլ - դժբախտաբար - աւելի ազատ խորհողներ: Եթէ իբրև անստգիւտ և ճշմարիտ կաթողիկեայ — ինչպէս կը դաւանիս զանձնդ - մտիկ ընել հաճիս, ես ապացուցանեմ և դու համոզուի՛ս: Անցողաբար ըսեմ որ շատ կը փափագէի որ ի շինութիւն անձինդ ուշի ուշով և անկողմնակալ ուղւով կարդայիր

նոր լոյս տեսած « Տեսութիւն Կանոնագրի նոր ծրագրի վրայ » գրքոյկը՝ այնքա՞ն օգտակար այժմեան պարագայից և հատու սուսեր խնդրոյն։ Ա-նոր ընթերցումը շատ պիտի օգտէ ամենուն, և մենք որովհետև շատ կ'ակնարկենք անոր, մէջը պարունակուած խնդիրները աւելի կ'ընդարձակենք ներկայ պատասխանագրոյս մէջ, այլ ևս հարկ չենք տեսներ անոր վրայ խոստացուած խորհրդածութիւնները ուրոյն տալ, բաւական սեպելով այս շարունակեալ յօդուածները։

Կ'ըսեմ ուրեմն։ Այնքան աղմուկներով և վրդովումներու գնով յօրինուած, վիճուած և շրջաբերուած նոր ծրագիրը՝ բացարձակապէս հայելի, պատկեր և թարգման է ոմանց գաղափարներուն և մտածելու կերպին. այս անհերքելի է։ Արդ տե՛ս ինձ, նոյն իսկ առաջին գլխոյն առաջին յօդուածին մէջ ինքնուրոյն եկեղեցին ուրուագծուած է, երկնասլաց թեթեւ-թեամբ, նուրբ շամանդաղէ մը՝ առաւօտեան շաղ ու շողէն պարուրուած։ Հոն կայ « Հայ - Կաթողիկի Եկեղեցւոյ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ». ի՞նչ ըսել է այդ, եթէ ոչ ինքնուրոյնութիւն. քանզի այդ եկեղեցին՝ անջատաբար ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցիէն, ունի իր հիմնական սկզբունքները. ուստի ասոնք անձեռնմխելի են։ Պիտի ըսե՛ս 1. Բայց ասոնք վաւերացեալ են « Կաթողիկէ սուրբ Եկեղեցւոյ Քահանայապետաց գերիշխանութեամբ »։ Նախ և առաջ պէտք է գիտենք որ այս տեսակ վաւերացում մը ո՛չ կրնայ ըլլալ և ո՛չ եղած է, քմածին և անճոռնի ենթադրական մոլորութիւն մըն է այդ, բայց՝ - dato et non concesso, ինչպէս կ'ըսեն Տրամաբանք, - ուրեմն Հռոմայ Գահը ստիպուած էր ճանչնալու և վաւերացնելու այս սկզբունքները, քանի որ հիմնական էին. ուրեմն ճանչցուած անջատ Եկեղեցի մըն է հայ - կաթողիկէ Եկեղեցին, որոյ հիմնական սկզբունքներն այս վաւերացմամբ աւելի անձեռնմխելի դարձած են. ուրեմն այս ոճը գործածողները « անջատ ազգային Եկեղեցի մը » ուզեցին։ Պիտի ըսե՛ս 2. Բայց այս բառը յետոյ փոխեցին և տեղը դրին իրաւունք բառը։ Սակայն, ո՛վ Դիտող, չարէն ի չարագոյն կը դիմես. կ'ըսեմ թէ՝ ա. ուրեմն հասկցան թէ անջատական բառ էր այն եւ ստիպուեցան փոխել. ուրեմն զայն խորհրդով հոն դնողները անջատողներ են, այս ինքն՝ « ինքնուրոյն և ազատ եկեղեցի հաստատել » ուզողներն են. ուրեմն այնպիսիներ ԿԱՆ. անել է փողոցը։ բ. Կ'ըսեմ թէ ի զուր վատնեցին ձայն, աշխատութիւն, մելան և ժամանակ. քանզի բան մը փոխած չեղան. մանաւանդ շատ աւելի է ԻՐԱՒՈՒՆՔ. որովհետև իրաւունք՝ դատաստանաբար վիճեալ, վճռեալ, անդիմադրելի ստացուած մըն է, ամենէն ճանչցուած և յարգուելիք. որ բացարձակապէս կը մերժէ

առանձնաշնորհումի գաղափարը. և զոր ստացողը անջաս տեր է։ Եւ հիշդ ասոր համար էր որ եկեղեցական իշխանութիւնն բացէ ի բաց մերժեց նաև այս փոփոխութիւնը։ Տե՛ս ինչ կ'ուսուցանէ սնոխալ Քահանայապետ մը, որուն դու անպայման հնազանդութիւն կը խոստանաս՝ գոնէ՛ ի հաւատոյս. « Եթէ եկեղեցական իրաւանց վրայ է խօսքը, ոչ ոք կրնայ տգիտանալ որ Եկեղեցւոյ և իւր նուիրապետութեան ու սահմանադրութեանց վրայ ամենևին աղգային կամ ժողովրդոց իրաւունք չեն ճանչնար ուղղափառք » (Quart. 36.)։ Ուրեմն խոստովանէ որ՝ ո՛չ միայն կային « ինքնուրոյն ազատ աղգային եկեղեցի մը հաստատել » խորհողներ, այլ և մնացին անոնք և շատցան։ Եւ թէպէտ այս (utopiste) երազատեսներու գոյութիւնը վեր հանելու համար հարկաւոր չէ աւելի ապացոյց, բայց որովհետև յայտմ մասին շատ վրդոված ես, լաւ է որ և ս առաւել ճանչնաս իրաց վիճակը և օգտուիս. 1. Պէտք է յիշես, որ եկեղեցական իշխանութեան պնդումներուն և մեկնութիւններուն հակառակ մերժեցին գնել Ս. Աթոռոյ պարտաւորիչ իշխանութիւնն ի բարեկարգականս եւ ի բարոյս, որ է հաւատոց է, կամ այն պայմանաւ ուզեցին զայն ընդունիլ որ՝ մեր ազգային Սինոդոսն ըլլայ անոր դատաւորը. յետ այսքան յայտնի մոլորութեանց, կարծես սրտակեղեք մղձաւանջէ մը ազատելու տենչանօք, այդ պարբերութիւնը կատարելապէս ջնջեցին։ Արդ այս երեք դրութիւններն ալ, պարագայից բերմամբ, հերետիկոսական են (ա՛լ չեմ գիտեր՝ նիւթական թէ կերպական)։ Եւ Նոր հերձուածողներն ևս ունէին այս մոլորութիւնը, այր վասն և դատապարտուեցան իբրև հերետիկոս (տ. Quartus, թիւ 13.)։ 2. Ազգային Սինոդոսը ընդունեցան վերին աստեան Հայ - կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, որ իր հիմնական սկզբունքներն ունի. հետևաբար անկախ է երբ վերին է. և չզօրեր բնաւ ըսել՝ ինչպէս դու կ'ըսես, թէ վերինը կ'ենթադրէ վերնագոյնը, որ Հռոմ ըլլալ կ'երևի, ենթադրութիւն չբաւեր հրամանակարգ վարդապետութեանց (dogmes) մէջ. հարկ անհրաժեշտ է վերնագոյն Աստեանն ալ բացորոշապէս անուանել, քանի որ վերինը կ'անուանուի վճռապէս. աստուածաբանութիւնը երկդիմութիւն չվերցներ, մանաւանդ կասկածելի տրամադրութեանց հանդէպ։ 3. Եւ միթէ իրաւունք չունի՞ կասկածելու եկեղեցական իշխանութիւնն, երբ, ժողովքի մէջ, իր առջև, պարագլուխներէն մին, կը համարձակի յայտարարել թէ՝ « Վատիկանու տիեզերական վերջին ժողովը Արևելքի մէջ չէ ընդունուած ». և գիտես որ այս նախադասութիւնը հերետիկոսական է։ 4. Դարձեալ մոլորեցան այնու զի գլխէ գլուխ եկեղեցական կանոնաց հակառակ յօդուածներ պարունակող այսպիսի ծրագիրի մը վեր-

ջին հաստատութիւնը (sanction) իրենց վերապահեցին մինչդեռ լոկ աշխարհական գործոց կանոնագրի մը վերջին հաստատութիւնն անգամ իրենց չկրնար վերաբերիլ, ալ մի միայն ֆիրման ունեցող Պատրիարքին ի կառավարութիւնէ ճանչցուած իշխանութեան։ 5. Պնդեցին և գիտակցաբար ընդունեցան յօդուածներ՝ կաթողիկոսական իշխանութիւնը տարածելու ամբողջ աշխարհի սահմանին մէջ. և այս կը վերաբերէր միայն Սրբ. Քահանայապետին, որոյ իրաւասութիւնը կ'իւրացնէին։ 6. Նոյնպէս ժպրհեցան նոր թեմեր բանալու կամ սահմանները որոշելու իրաւունքը իւրացնել, որ նոյն պէս Քահանայապետին է արտաքսաբար։ 7. Նոյնպէս եկեղեցական ընչից օտարացման իշխանութիւնը յինքեանս կորզեցին. այս ալ մի միայն Հռոմայ Ս. Աթոռոյն կը պատկանի։ 8. Բացայայտ բանիւք սպառնացին քալել Սինոդոսի վրայ և զայն ՍՏԻՊԵԼ ընդունելու իրենց ծրագիրը։ — Դեռ ո՞ր մէկն համրեմ. intelligenti pauca։ Եթէ կ'ուզես քաջագոյնս, խորասուզիլ այս քննութեան մէջ ի չինութիւն անձինդ, կարդա՛ խնդրեմ վերոյիշեալ գրքոյկը՝ « Տեսութիւն Կանոնագրի նոր ծրագրին վրայ », յոյժ օգտակար և հատու, անկեղծներու համար, ինչպէս կենթադրեմ զքեզ։ Դարձեալ լսուած է ստուգապէս որ ժողովի մէջ անդամ մը՝ արտաբերած է սա բառերը. « Մենք ինքնուրոյն եկեղեցի ենք »։ Ըսէ՛ ուրեմն. այս բոլոր պարագայներն ի միասին առնելով, ներելի չէ՞ արդեօք կասկածիլ թէ « Ոմանք կ'ուզեն ինքնուրոյն եւ ազատ եկեղեցի հաստատել »։... Կարծեմ՝ այո՛ և այո՛. հետևաբար պիտի ստիպուիս — անկեղծօրէն — ետ առնուլ այն անխորհուրդ բացագանչութիւնդ. « Ամո՞թ այսպիսի յանդուգն դատողութեան ». ետ չառնուլը պիտի լինէր ամօթ։

(Շարունակելի) Կաթողիկէ

ԹԵՄԵՐՈՒ ՁԱՑՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

1. Արքեպիսկոպոս մը կը գրէ.

« Պօլսոյ մեր հասարակութեան բռնած ընթացքը՝ ի մասին ազգային նոր ծրագրին շատ պախարակելի է, և չգիտեմք թէ ո՞րպիսի խղճմտանքով կը պնդեն և կը թախանցեն իսկ նորին իրագործումը. նաև կը զար-

մանամբ թէ ինչպէս եկեղեցական օրինաց հակառակ եղած, և համայն մեր Նուիրապետութեան վնասակար դատուած ծրագիր մը, կ'ուզեն որ կանոն գործոց ըլլայ մեզի՝ ...

Ինչպէս որ Ձեր Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէրութիւնը գիտէ, մենք ի սկզբանէ ի վեր մեր գրութիւններով ակներև ցոյց տուած ենք այդ ձեռնարկին վնասակարութիւնը և անտեղիութիւնը, և բացարձակապէս մերժեցինք այդօրինակ ծրագրի մը ընդունելութիւնը, այժմ իսկ մի և նոյն գաղափարի տէր ենք, և չ'պիտի դադրինք զայն մերժելէն մեր բոլոր զօրութեամբ և ազդեցութեամբ, եւ ապահով եղէք որ մենք պատուական կղերներով և բարեկրօն ժողովրդեամբ Ձեզի հետ միացած ենք ի սիրտ և ի հոգի, և տրամադիր ենք անթերի պահելու և պաշտպանելու կաթողիկէ եկեղեցւոյ սկզբունքները, և մեր Նուիրապետութեան սրբազան իրաւունքները, և անշուշտ մեր թեմին երկու հարիւր տարիէ ի վեր, Առաքելական Ս. Աթոռոյն հետ սերտ միացումը, մեծ առհուատչեայ մ'է ապագային մէջ մի և նոյն պահպանութիւնը և պաշտպանութիւնը անխախտ ունենալու։

Ասկից զատ կրնաք, Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր Տէր ապահով ըլլալ թէ, մենք կազմ և պատրաստ ենք ստատ եւ օգնական ըլլալու Ձեզի յամենայնի, որքան կը ներէ մեզի մեր կարողութիւնը. և Ամենապատիւ Տէրութեանդ հետ համերաշխ ըլլալու մեզի պարծանք կը սեպենք մանաւանդ այն բաներու մէջ, որոնք կը հային առ անտխեղծ պահպանութիւն եկեղեցական օրինաց և իրաւանց։

---

2. Եպիսկոպոս մը կը գրէ.

«Երբ Պոլիս տեղի ունեցած ինչինչ ցաւալի դէպքերու՝ և տեղւոյս ժողովրդեան մէկ մասին բռնած յոռի ընթացքին համար տրտում տխուր ու մտահոգ կը տառապէի, ահա Ձեր մայիս 4. թուակիր գրութիւնը եկաւ հասաւ, փարատեց ամէն մտատանջութիւն և տատամսութիւն ու ցոյց տալու ճշդիւ մեր Նուիրապետութեան ներկայ ընդհանուր վիճակին և անոր դէմ պայքար մղողներուն հանգամանքները և անոնց յաղթելու պայմանները՝ նոր ոգի՝ նոր սիրտ պարգևեց ինձ։

Ո՛հ երբէք չեմ կարող խօսքով բացատրել թէ ի՛նչ ուրախութիւն ու քաջալերութիւն է ինձի՝ այսպիսի ժամանակի մը մէջ մեր Նուիրապետու-

թեան Սրբազան բանակին առջևը կանգնած տեսնել Ձեզի պէս սուրբ խանդով տոգորուած, հոգւոց փրկութեան սիրով զեղուն, ճշմարիտ հաւատքի վահանովը պատապարուած սրբութեան և գիտութեան երկայրի սուրովը զինուած անվեհեր զօրագլուխ մը։

Ցառա՛ջ, Ամենապատիւ Տէր, յառա՛ջ։ Վստահ եղէք թէ ամէնքնիս ալ պիտի հետևինք Ձեզի արիաբար, պիտի գանք ու՛ր որ զմեզ տանիք. պիտի պաշտպանենք ինչ որ պաշտպանել հրամայէք. պիտի մերժենք ինչ որ պատուիրէք մերժել։ Ո՛և է դժուարութիւն չպիտի զօրէ խոտորել զմեզ ճշմարիտ սկզբունքներու շաւղէն։

Տա՛ն երկինք յաջողութիւն Կրօնի և Ազգին օգտակար այն ամէն գաղափարներուն զոր պարզած էիք Ձեր նամակին մէջ, որոնց իրագործումովը միայն կարելի պիտի ըլլայ արդարև հաստատել հիմերը՝ քանդում սպառնացող մեր Հասարակութեան և ապահովել նոյնին յաւիտենական և ժամանակաւոր երջանկութիւնը»։

---

3. Ժողովրդապետ մը կը գրէ.

Սեբաստիա 2-15 Յուլիս 1911

«Մենք, ստորագրեալքս, հոս հպատակ և անկեղծ որդիք Հռովմէական Կաթողիկէ և առաքելական Ս. Եկեղեցւոյ, դատապարտուած կ'ընդունինք ինչ որ դատապարտուած է նոյն Կաթողիկէ եկեղեցւոյն ծայրագոյն Գլխէն, և կ'ընդունինք ինչ որ կ'առաջարկէ մեզ ընդունել. և մեր բուռն զայրութիւնը կը բողոքենք. հրամանաւ Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետի, Ամեն. Պ. Պ. Թէրզեան Կաթողիկոսէն դատապարտուած Պօլսոյ երեսփխանական ըսուած ժողովոյն, ներկայիս Կաթողիկէ անյեղլի և հիմնական իրաւունքի և սկզբանց հակառակ բռնած ապօրէն ընթացից դէմ։

Յովսէփ Վ. Մոմճեան
Ժողովրդապետ Սեբաստիոյ

(կը հետևին 19 ստորագրութիւնք)

Ծան. Տեղւոյս Հայ Կաթողիկէ հասարակութեան պատկանող մէկ քանի անձինք ներկայ չգտնուելնուն համար, ստորագրած չեն. 15 ընտանեաց հայրեր ալ կրնային ստորագրել, ուստի 19 ստորագրութեանց վրայ 15 ալ

կրնայ բարդուիլ. տեղւոյս 2-3 ը հազիւ երեսփոխանական ընուած ապրստամբ ժողովին նպաստաւոր գտնուեցան դժբաղտաբար. ոչինչ. ինչ նշանակութիւն ունին։



ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Մահ Կարդինալ Մորանի

Առ Տէր փոխուած է յԱւստրալիա Սիտնի քաղաքին Արքեպիսկոպոս Կարդինալ Պ. Մորան, ուրանամեայ ալեզարդ վաստակաւոր և առաքելական մշակ։ Երբ 1894 ին կարդեցաւ այն Աթոռին, կաթողիկէութիւնը շատ անշան էր հոն. որ ապա արագաքայլ զարգացաւ անոր անխոնջ եռանդովն ու հնարագիտութեամբը։ Գաւառական ժողով մը գումարեց որուն մասնակցեցան 23 եպիսկոպոսունք Աւստրալիոյ։ Ի 1884 բնաւ կաթողիկէ դպրոց մը չկար հոն. իսկ հիմա երկրագունտիս այս հինգերորդ մասին մէջ գտնուող կաթողիկէ դպրոցներու թիւն է խաւն եւ վեց հազար և ամբողջ աւստրալիական բնակչութեան մէկ չորրորդը կը կազմեն կաթողիկեայք։ Մարդասիրական և ուսումնական հաստատութիւններ, մեծաշէն տաճարներ, որբանոցներ ամէն տեղ կը կանգնին կարծես հմայքով։ Բարեկամ և պաշտպան եղաւ գործաւորներու և տկարներու. և իր առջև խոնարհեցան մեծարանօք կաթողիկեայք և անհաւատք. և Ովկիանիա բովանդակ կուլայ այսօր դժնդակ կորուստը։

Եթովպիական պատուիրակութիւնը՝ հինգ մեծամեծներէ բաղկացեալ, որ գնացած էր ի Լոնտրա Գէորգ Ե. Թագաւորին պսակադրութեան հանդիսին համար, Հռոմ ալ եկած էր ի դարձին։ Անցեալ օր գնացին ի Ս. Պետրոս Եկեղեցին, և ակնապիշ մնացին սրբազան Տաճարին հոյակապ շքեղութեան առջև. և երբ ծնրադիր և ջերմեռանդն կ'աղօթէին Առաքելոց Գլխոյն սրբանուէր Շիրմին առջև, յանկարծ իրենցմէ մին մատէն հանեց թանկագին մատանին և դրաւ շիրմին խորանին վրայ, իբրև նուէր հպատակութեան։ Հանդիսատեսները խորապէս յուզուեցան. և առաջին Աւան-

դապահ Գեր. ը, Նուիրատուին անունն և թուականը արձանագրեց մայր տոմարին մէջ և մատնին՝ կից ունենալով յիշատակագիր մը, դրուեցաւ ի գանձարանի։

***

Եւրոպական թերթեր հետևեալ ցաւալի լուրը կուտան։ Ի Լայբցիկ գտնուեցաւ և ձերբակալուեցաւ հայ ուսանող մը, որ յաճախելով Պերլինի արքայական, Համալսարանական և վաճառականական Մատենադարանները, շատ մը էջեր կտրած էր հազուագիւտ և թանկագին երկերու։

Աւա՜ղ որպիսի՛ կեղտ հայ անուան՝ ամբողջ խորհող Եւրոպայի առջև։ Եւ ուսանող մը... Հապա բարոյական դաստիարակութիւնը։ Քաղաքական աւազակային ոճիրներէ վերջ, հիմա այս տեսակ ստորին գրական ոճիր մըն ալ։ Իրաւունք պիտի չունենա՞ն Եւրոպացիք խեթիւ և կասկածանօք նայելու հայոց վրայ... իբրև բարբարոսաց։ Գործ մը որ ամբողջ ազգը կ'արատաւորէ։

Ազատախոհութիւնն ու անխղճութիւնը մեծ մաս ունին այս ողբալի գործոյն մէջ։

Կրօնասէր երկիւղած երիտասարդ մը երբէք պիտի յանձն չառնուր այսքան խայտառակութիւն։

Փ. Պիանիի
Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մատրիտի Հանաժողովին վերջ երկու խօսք . . . . . էջ 119
Պատասխան առ դիտող . . . . . » 122
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական Տրամադրութեանց . . . » 126
Տեղեկագրական . . . . . » 129

Հրատարակուած է տետրակ մը « Տեսութիւն Կանոնագրի Նոր Ծրագրի վրայ » յորդորուած: Լուրջ քննադատութիւն մըն է հակադրաւոր ծրագրին, եւ ցոյց կուտայ անոր զգեաւոր կէտերը որ հակասական են իրարու հետ եւ անկոնցմէն կանոնաց: Ցաւ կարեւոր պարունակութեանը պատճառաւ յառաջիկայ թուով ամբողջ տանք անոր վրայ մեր խորհրդածութիւնները: